Ծեսով ուսուցում

Ծրագրի ընդհանուր նկարագիր

«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրում ծեսով ուսուցումը հեղինակային կրթական ծրագրի բաղկացուցիչ մասն է: Ծեսի իրականացումը նախակրթարանում հենց ծես է՝ ուսումնական «արարողակարգ»:
Ծեսի իրականացումն անարդյունավետ ու ինքնանպատակ չէ. այն ուսուցում է կյանքով, որտեղ սանն ինքն է խաղում, բացահայտում, և այս ամենն անընդհատ է, սանի համար հայտնագործությունների անվերջ շղթա, որով ապրում է իմացումի անծայրածիր հրճվանքը:

Ծեսի մասնակիցներն ինչպես նախապատրաստական, այնպես էլ իրականացման ընթացքում կիրառում են իրենց կարողությունները, հմտությունները, գիտելիքները: Սանը, քայլ առ քայլ ազատ միջավայրում իր առօրյա գործունեությամբ, կարողություններ և հմտություններ ձեռք բերելով ու փոխանցելով, ակամայից յուրացնում է ծեսը: Բաց, թափանցիկ, ազատ միջավայրում, առանց անգիրի, առանց հատուկ մշակված, դերային բաժանում արած տեքստի՝ նրանք խաղարկում են ծիսական գործողությունները՝ երգելով, պարելով, թռնոցիներով, բակային և ազգային խաղիկներով, ուտեստներով, թավալվելով, ալրոտվելով և այս ամենը տեղափոխում տուն՝ անմիջական մասնակիցը դարձնելով ծնողին:

Ծրագրի նպատակ և խնդիրներ

Նախակրթարանում սանի համար ազգային-ավանդական ծեսի ճանաչման ամենաարդյունավետ ձևը խաղն է, այդպես ավելի տպավորիչ ու հասանելի է, հասկանալի, գործնական:

Նախագծի նպատակն է ծեսը դարձնել երեխայինը, և որ նա լինի ոչ միայն մասնակիցը, այլև փոխանցողը ու տարածողը:

Ծրագրի նպատակն ու խնդիրներն են՝

- ծեսի կենդանի, իրական կյանքով ուսուցում,
- երեխայի՝ ծեսերի, ավանդույթների յուրացման կարողությունների ձեռքբերում,
- ուսումնական նյութերի յուրացում՝ խաղով, երգով, պարով,
- սանի, ծնողի՝ ծեսին անմիջական մասնակից ու տարածող դարձնելու կարողությունների ձևավորում:

- սոցիալական ակտիվ միջավայրի, հավաքանու ձևավորում և զարգացում,
- համագործակցային գործունեության, իրար աջակցելու կուլտուրայի ձևավորվում,
- մեդիահմտությունների ձևավորում մեդիագործիքների միջոցով (հեռախոս, պլանշետ, ձայնագրիչ, Paint),
- սաների դիտողականության ու ուշադրության զարգացում, բառապաշարի հարստացում,
- ստեղծագործական երևակայության զարգացում,
- հաղորդակցվելու, համագործակցելու ունակությունների զարգացում:

Ծրագրի իրականացման պլան

Նախքան ծեսի նախապատրաստությունը, դաստիարակների լաբորատորիան երաժիշտների, տեխնոլոգների հետ քննարկում է կազմակերպում, հավաքում տեղեկատվություն տվյալ ծեսի մասին, և կազմում են աշխատանքային նախագիծ, որը հրապարակվում է լաբորատորիայի և դաստիարակների բլոգներում: Սեմինարների ժամանակ դաստիարակները յուրացնում են ծեսը և իրագործում խմբերում: «Ծիսական» սեմինարներին մասնակցում են նաև ծնողները, որոնք ցանկանում են յուրացնել և տարածել ազգային ծեսերը:

Կարևոր աշխատանք է ծեսի մասին տեղեկատվության հավաքումը: Ծեսերին նոր կյանք տալու համար հարկավոր է նախ շատ լավ յուրացնել ավանդականը, ճանաչել այն միջավայրը, որտեղ ստեղծվել են դրանք: Իհարկե, ծեսին նոր կյանք տալ չի նշանակում ակունքից բոլորովին հեռանալ, հնարավոր է հնի վրա կառուցել նորը: Այդ ժամանակ նաև բանահավաքչությամբ ենք զբաղվում. ծնողներից, տատիկ-պապիկներից ձայնագրում կամ գրառումներ ենք կատարում, հետաքրքիր սովորույթները, ավանդույթներն ուսումնասիրում, քննարկում ենք մասնագետների հետ և ներառում նախագծերի մեջ: Դրանք կարող են լինել մեզ դեռևս անծանոթ օրհնանքներ, խաղիկներ, հաշվերգեր, ասույթներ, ուտեստներ, հետաքրքիր ավանդույթներ, ինչպես նաև արդեն հայտնի ժողովրդական ստեղծագործությունների տարբերակներ, որոնք մշակում ենք և կիրառում: Դաստիարակը ոչ միայն հետազոտական, ստեղծական աշխատանք է կատարում, այլև դառնում է իր գործունեության նախագծողը, իրականացնողը և տարածողը:

Նախակրթարանում, ինչպես և իրական կյանքում, ծիսական գործունեությունը որոշակի փուլեր է ենթադրում՝

- ծեսի նախապատրաստում,
- ծիսակատարություն, որը ներառում է՝
    - ծիսական երգեր, ոտանավորներ, պարեր,

- ազգային ծիսական խաղիկներ-թռնոցիներ,
- ծիսական տիկնիկներ, կերպարներ, ինքնաշեն խաղալիքներ, երաժշտական գործիքներ-շրխկաներ,
- ծիսական ուտեստներ:

Նախակրթարանում իրականացված ծեսերի փաթեթ՝

- Ատամհատիկի ծես
- Խաղողածես
- Ղափամայի ծես
- Լավաշթխիկի ծես
- Ծննդյան ծես
- Վարդավառի ծես
- Ամանորի ծես. Ավետիսներ
- Թթուդրիկի ծես
- Ծառզարդար-Զատկածես
- Տյառնընդառաջ, Բարեկենդանի ծես
- Համբարձման ծես
- Հարիսայի ծես

Ծիսական նյութերի փաթեթ՝

- Ծիսական երգերի փաթեթ
- Ծիսական ասիկների- ճվիկների, խաղիկների-թռնոցիների փաթեթ
- Ծիսական կերակրատեսակների փաթեթ
- Ծիսական տիկնիկների փաթեթ

«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրում տեղի են ունենում նախադպրոցական հաստատություններում աշխատող դաստիարակների, երաժիշտների, տնօրենների շուրջտարյա ծեսով վերապատրաստումներ, «Բլեյան կրթական ցանց»-ով նախագծային համագործակցություն, որոնց ընթացքում իրականացվում է կրթահամալիրի հեղինակային ծիսական ծրագրերի փոխանցում, համագործակցություն:

«Բլեյան կրթական ցանց» նախագծային համագործակցություն

- «Ծառզարդար-Զատիկ դպրոց-պարտեզը ծեսի բաց լաբորատորիա» ուսումնական նախագիծ. Գյումրի
- «Զատիկ-Կանաչ-Կարմիր կիրակի կամ Կրկնազատիկ». Բյուրական

- «Թթուդրիկ-Լավաշթխիկ» ուսումնական նախագիծ. Սասունիկ
- «Համբարձման ծես » ուսումնական նախագիծ. Սասունիկ
- «Կանաչ-կարմիր կիրակի.» ուսումնական նախագիծ.Աշտարակ
- Դաստիարակների լաբորատորիայի աշխատանք Գագարինի, Գեղամավանի մանկապարտեզներում
- Բլեյան ցանցով աշխատանք Դդմաշենի, Լճաշենի մանկապարտեզներում
- Բլեյան ցանցով վերապատրաստում. Կապան, ամփոփում
- Բլեյան ցանցով համագործակցություն. Փարպիի մանկապարտեզ

Ծրագրի շարունակականության ապահովում

Շուրջտարյա նախագծերը, ծիսական գործունեությունն ապահովում են ծրագրի շարունակականությունը, ինչի արդյունքում զարգանում են մի շարք հմտություններ ու կարողություններ՝

- նպատակաուղղված աշխատելու հմտություններ,
- գործողությունները կարգավորելու, շարժումները կոորդինացնելու կարողություններ,
- ուշադարության կենտրոնացման հմտություններ,
- զգույշ և անվտանգ աշխատելու հմտության ձևավորում և զարգացում,
- ինքնուրույնության, ինքնասպասարկման հմտությունների ձևավորում և զարգացում,
- խմբով և անհատապես աշխատելու ունակությունների ձևավորում,
- ուշադրության, կողմնորոշվելու, կենտրոնանալու, սոցիալական միջավայրում շփվելու, համագործակցելու կարողությունների զարգացում,
- սեփական հետաքրքրությունները բավարարելու, դիտելու, ուսումնասիրելու ունակությունների, ինքնակրթվելու կարողության ձևավորում և զարգացում,
- խոսքի զարգացում. ստեղծագործական երևակայություն, խոսք կառուցելու ունակություն, ինքնարտահայտում, ինքնադրսևորում, հաղորդակցական, խոսք փոխանցելու ունակությունների ձևավորում,
- մեդիատեխնոլոգիական, տեխնոլոգիական հմտությունների ձևավորում,
- բանավոր հաշվի, դիտարկելու, բնագիտական փորձեր կատարելու հմտությունների ձևավորում,
- ծեսի միջոցով ազգային երգի-պարի-խաղի յուրացում և այլն։